

ՊԱՏԱՆԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՈՒԹՅՈՒՆ

Պաշտարան	համար
Տարեկան	12 Ֆր
Վեցամսյան	6 "
Արժանատիների համար տարեկան	15 "
Վեցամսյան	8 "
Անկերթի համար	
Տարեկան	3 սյր.
Վեցամսյան	1.50 "

Ծանուցում ենք, որ 1904 թ. հունիսի 1-ին կ'ընդունվի նոր համար 20 սանթիմ կ. և 1905 թ. հունիսի 1-ին կ'ընդունվի նոր համար 20 0/0 զեղչ կըլլա:

ՉԱՐԺՈՒՄ

ԻՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՂԱՅՈՒԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐ ՏՐԱՆՍԻՒՆ ԶՈՐԵՔԵՆԱԹԻ ԵՒ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՕՐԵՐԸ

Նախկին իրազրույթի հասցի

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Charjoun“ Varna (Bulgarie)

Արժանատիների համար
ձեռք
(20 ՍԱՆԹԻՄ)
Պաշտարանի համար
ձեռք
(15 ՍԱՆԹԻՄ)

Գրառքի մեջ ևս չեն տրուի

ՉԱՐԺՈՒՄԻ ԲԱՏԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՏԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏՐ ԵՒ ԿՈՆՍՏԱՆՍՆԱԿԱՆ ՎՃԱՐԵՆ

ՄԵՐ ԲԱՏԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՈՒԹՅԱՆ

Մեր այն բաժանորդներն են, որոնք դեռ իրենց հաշիւները չեն մաքրած, կը խնդրուի որ փոխան վճարել իրենց պարտքերը: Անոնք պէտք է գիտնան, որ պարտաճանաչութիւնը առաքիւնութիւն մըն է:

Պարտատանի մեր բաժանորդները կարող են ուսական թղթագրած դրկել ապառովագրուած նամակներու մէջ, 1 րուպլին 2 Ֆր. 60 սնթ. հաշուով:

ԲՈՒՆԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԸ ԵՒ ՀԱՅԵՐՍ

Վերջին մեր դժբաղդ տարիներում առհասարակ բուլղար մամուլը շատ համակրանքով է վերաբերվել դէպի մեզ:

Կոտորածներին ցետոյ ոչ միայն թերթերի սիւնակներէն էին լցվում մեր ցտարի ու տառապանքները, նկարագրութիւններով, այլև առանձին բրոշուրներ էին հրատարակում և նրանց հեղինակները զատարան հրաւիրվում կարմիր Սովետներին անպատճառ և վիրտորաժ լինելու համար:

Անցեալ ամառ միայն, մակեդոնական ապստամբութեան միջոցին, «Վեչ. Պոչտա» թերթը մի հայերիս հասցէին ուղղված խմբագրականով նախատական խօսքեր թափեց մեր դժբախտ ժողովրդի երեսին և խլաց լուր-գարական մամուլի սրտացաւ գոչերի սիրուն ներգաշնակութիւնը: «Շարժումը» այդ տղեկ «գիտնական» իսկոյն պատասխանեց ինչպէս որ պէտք էր. բուլղարներէն լեզուով: Պատասխանը պիտի եկաւ ոչ միայն հայերին, այլև բոլոր բուլղար ինտելիգէնտներին. որոնք համակրութեամբ են վերաբերվում դէպի մեզ և որոնց հաճելի շէր եղել «Վեչ. Պոչտա» յի յոգևածը:

Մենք դեռ այնժամանակ հա

ւատքը ունէինք թէ «Վեչերնա» Պոչտայի խմբագրութիւնը իր կրպիտ սխալը կը շտկէ մեր պատասխանը արտասպելով, սակայն այդպէս չեղաւ: Պ. Շահգոյլը բուլղարները լռեց. այդ լռութիւնն էլ մեզ կարծեցնել տւեց որ Պ. խմբագիրը զղացել է իր սխալը, բայց լռելը աւելի է գերադասում, քան արժանի պատասխան արտասպելը:

Բայց լաւ է ուշ, քան երբէք: Եթէ «Վեչ. Պոչտա» չը կարողացաւ ժամանակին իր սխալը ուղղել, այս օրերս նա ուղղեց՝ հայերիս մասին մի համակրական նախաջօղւած հրատարակելով, նիւթ ունենալով իրեն ուսական բունութիւնները և հայերի դիմագրութիւնը:

Այդ յօդուածով «Վեչ. Պոչտա» կատարեց իր պարտականութիւնը և մենք շնորհատու ենք այդ քայլի մէջ, ու խորհուրդ տալիս յարգելի խմբագրին ժողովրդներին հանդէպ այնպիսի կեծ սխալներով մէջ շնչել, որոնց շտկելը այդքան զբաղաւորութեամբ է կատարվում:

ԲՈՒՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐԸ ՀԱՅ. ԵՒՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐԸ ԿՍՏԱՆՍՆԱԿԱՆ ԵՒ ՄԱՍՈՒԼԸ

Ինչպէս յայտնի է. Ռուս կառավարութիւնը իր 1903 Մայիսի օրէնքին պաշտօնագրին համեմատ գրաւեց Հայ. Եկեղեցիին գոյքերը, կալուածները և զբրահները: Այս օրէնքին գործադրութեան համար պատրաստուած կանոնագրին բնագիրը կը հրատարակենք ստորև, որ հաստատուած է Ռուս ներքին գործոց նախարարութեան:

Ա. — Կանոնագիրը կը պարունակէ տեղեկութիւններ Հայ. Լուսաւորչական եկեղեցիի այն կալուածներուն մասին, որոնք 1903 յուլիս 12ին նախարարաց Յանձնաժողովին որոշման հիման վրայ

եկեղեցական իշխանութեան հանուելով կը յանձնուին Եւրոպական Ռուսաստանի սահմաններուն մէջ ներքին գործոց նախարարութեան, հրկրագործութեան և Պետական կալուածներու նախարարութեան, և այդ կալուածներուն գտնուած տեղին համեմատ, նահանգապետներուն և քաղաքապետներուն: Իսկ կովկասեան երկրին շրջակները գտնուող թեմերուն մէջ յանձնուած են կառավարչապետի վարչութեան, իրագործութեան և Պետական կալուածներու նախարարութեան լիազօր ներկայացուցիչին և կամ տեղին համեմատ նահանգապետներուն, և շրջանակներու հրամանատարներուն: Երկրագործութեան և Պետական կալուածներու նախարարութեան լիազօր ներկայացուցիչին և կամ տեղին համեմատ նահանգապետներուն, և շրջանակներու հրամանատարներուն: Երկրագործութեան և Պետական կալուածներու նախարարութեան լիազօր ներկայացուցիչը իրենց ստացած տեղեկութիւնները կը հաղորդեն իրենց ստորագաս նահանգական վարչութիւններուն:

Բ. — Նահանգապետները էջ միածնի Սինոդին վերջին հաշիւներէն քաղուած ցուցակներուն ձեռք այս տեղեկութիւնները ստանալէ ետք, Պետական կալուածներու կառավարչներուն հետ համաձայնութիւն գոյացնելէ յետոյ, կարգադրութիւն կ'ընեն միեւնոյն ատեն զրկել իրեն ստորագաս վստահելի պաշտօնատար անձներուն այդ տեղեկութիւնները, որպէս զի մէկտեղ ընդունին Հայ. Լուսաւորչական եկեղեցական հաստատութիւններուն տեսչութիւններէն, եկեղեցական կալուածներն ու գրտմագրութիւնները, այս վերոյիշեալ անձներուն տալով հարկ եղած ապացոյցները, պաշտօնական առաջարկութիւնը և ընդունելութեան համար պէտք եղած արձանագրութիւններուն և ցուցակներուն ներմոյշները:

Գ. — Իւրաքանչիւր քաղաքի և գաւառներու մէջ անշարժ կալուածներուն և գրամագրութիւններուն պաշտօնական ընդունելութիւնը կ'սկսի ամէնէն առաջ այն

գոյքերէն, որոնք իրենց մեծութիւնովը աչքի կը զարնեն:

Դ. — Յիշուած պաշտօնեաները իրենց որոշեալ տեղը հասնելուն պէս կը հրաւիրեն տեղական ուստիկանութեան ներկայացուցիչները, տեղական Հայ. Եկեղեցոյ պաշտօնեան, թէ իր բնակայ, — նոյնպէս այդ պաշտօնային կամ եկեղեցական հաստատութեան ներկայացուցիչը, որուն տեսչութեանը առկ կը գտնուի գրաւուելիք գոյքը, որպէս զի աջակից ըլլան իրենց յանձնարարուած գործին: Ասոնցմէ զատ կը հրաւիրուին նաև քաղաքներու մէջ քաղաքային վարչութեան ներկայացուցիչը, իսկ գիւղերու մէջ շէջք և բարեխիղճ անհատներ, որոնք պէտք է որ առնուազն երկու անձեր ըլլան, ինչպէս նաև գիւղապետը: Եկեղ. կալուածներու ընդունելութեանը ժամանակ պէտք է որ ներկայ գտնուի այդ գրաւուած հաստատութեան ներկայացուցիչը կամ եկեղեցապետը, որուն անմիջական վարչութեան տակ է գրաւուելիք գոյքերը:

Ե. — Իրաւութիւնը կալուածները աչքէ անցնել սկսելով այդ բանին համար լիազօրութիւն ունեցող անձերը նախ պէտք է պահանջեն որ եկեղեցականը, վանահայրը, կամ հոգեւոր հաստատութեան ներկայացուցիչը իրենց ամբողջ եկեղեցական, վանական գոյքերուն, և հոգեւոր դպրոցներու գոյքերուն ցուցակը ներկայացնէ, նոյնպէս ստորագաւանութեանց հոգեւոր եկեղեցական գործերու կանոնագրութեան հազար երկու հարիւր քսանըվեց յօդուածով սահմանուած ժապաւէնուած տետրակները, յատկապէս գիծերը, պայմանագիրները, սեպհականութեան իսկական վաւերացումները, պարտագիրները, ընկալագիրները, իրենց գրամագրութիւններուն կամ ինայոցական գանձարանին հաշիւետետրերը, ինչպէս նաև այն բոլոր սօքիւմանները, որոնք կը վերաբերին այդ եկեղեցական գոյքե-

րուն և գրամագլուխներուն :
 ԻՄԱՆՈՅԻՄԻՒՆ. — Հայ Լուսա-
 ուորական վանքերուն մեծամասնու-
 թեան մէջ կրօնական միարանութիւն-
 ներուն և օտար դաւանութիւններու
 հոգեւոր գործերու կանոնագրութեան
 օրէնքով սահմանուած վանական վար-
 շութիւններու չգոյութեանց պատճա-
 քով պէտք է որ ներկայ պայմաննե-
 րուն մէջ կայրածներ բնորոշելու ակ-
 ղը երթալէ առաջ պահանջուի թեմա-
 կան նկիւնացական իշխանութիւննե-
 րէն այս վերու յիշուածները, որոնք
 կը պարտենակին իշխանց մէջ, մասնա-
 լոր ցուցակները և վարարութիւնները :
 (Շարունակելի)

Մանգուլիի էպիսկոպոս

«ԻՐԱՆՈՒՆԻՒՆ» ԹԵՐԹԻ
 Պ. Պ. ԽՄԲՅԻՆԻՆԵՐԻՆ
 ՊԱՏՃԷՆԸ «ՇԱՐԺՈՒՆ»
 ԽՄԲ. Ա. Գ. Ռ. Ա. Ե. Ա. Ն.

Ի՞նչ թիւ 97րդ թուով իմ նօ...
 յայտարարութեան առթիւ, որը
 վերաբերում էր նոր իրենտրակո-
 շութեան ցանկերի մէջ օտարա-
 հայատակ երիտասարդների ցու-
 ցակազմի վերաբերյալ, առում էք որ վե-
 րոյիշեալ յայտարարութեան նը-
 պատակն է թուրքալից զապիւթած
 հայ երիտասարդներին վախեց-
 անելը, որպէս զի նրանք չը մաս-
 նակցեն հայ կիւլթաբան
 խորհրդի ընտրութեանը և իբր
 թէ այդպէս եղել է քաղաքային
 խորհրդի անդամ Յովակիմ Խոփ-
 մասեանի ցանկութեամբ :

Ձեր գրածը, Պ. Պ. իմ քաղաք-
 ներ, մի անորակելի զրպարտու-
 թիւն է, որովհետեւ նախ յայ-
 տարարութիւնը միայն հայ երի-
 տասարդներին չէ վերաբերում,
 այլ բոլոր օտարահայտակներին,
 որոնք իրենց հայրենիքի զին-
 տրագրութիւնից փոխած են :
 Անորակելի զրպարտութիւնն էմ
 անուանում նրա համար, որ ձեր
 թերթի խմբագիրներին մէկը Պ.
 Գուրգիսեան, զեւ այդ յայտա-
 րարութիւնը տրած միջոցին ինձ
 ներկայացու և ես նրան բացատ-
 րեցի որ օրէնքի համաձայն ե-
 ղած այդ կարգադրութիւնը վե-
 րաբերում է միայն նրանց, ու-
 թոնք վախճում են իրենց հայ-
 րենիքի զինտրագրութիւնից, և
 չէ քննուած թրքահայատակ հայե-
 րին, որոնք զինտրութեան փո-
 խարէն «բէտէլ» են վճարում և
 այդպէսով իրենց զինտրական
 պարտականութիւնը կատարած հա-
 մարվում իրենց հայրենիքի օրի-
 նաց համաձայն : Ինչպէս անում են
 թուրք երիտասարդները Բուլ-
 զարիայում : Իմ այս բացատրու-
 թիւնը որ Գուրգիսեանը իր թեր-
 թում իբր իր կարծիքն է յայտ-
 նում—բաւական որոշ էր հանգս-
 տացնելու ամենքին և պէտք չը
 կար Պ. Յ. Թովմասեանին զրպար-
 տելու, որը իբրեւ քաղաքային
 խորհրդի անդամ չէր կարող

գիտնայ թէ մի այդպիսի յայտա-
 րարութիւն պէտք է տրուի, ո-
 թովհետեւ զայն յայտարարելու
 համար քաղաքային խորհուրդը
 չը պէտք է որոշէ, այլ օրէնքը
 կը թելարէ քաղաքային :

Վստնա քաղաք 24 դ. կ. 1903
 Վարձայի Բաղաւաղի Գեղեղի

«ՀԻՅ ՅԵՂՈՓՈՍ» ԿԻՆ
 ԳՈՅՈՒՆԻՒՆԻՒՆԻՆԵՐԻՆ ԵՐԿԻՐԻ ՄԷՋ

Աս նիւթին վրայ խօսեցաւ ՍԱ-
 ՍՈՒՆԷՆ նոր եկող գաղանկացի
 գործիչ Պ. Անտ Թորգոմեան՝ 300ի
 չափ բազմ. լիւթեան մը ներկայութեան,
 որ փութացած էր ներկայ ըլլալ քա-
 ղաքիս Եկիւրեանի թատրոնի կից
 ընդարձակ սրահը ամսուս կին, կի-
 րակի գիշեր :

Յարգելի ատենախօսը աչքի առնե-
 ունենալով յիշատակութեան շուրջը
 զարձած արաստանման արժուի-
 ները, իրենց պահպանողական, խո-
 հեմական և չիմ գիտելի նշանակող
 մերթ, հարց դրաւ թէ՛ արդեօք
 երկրի ժողովուրդը ինչ տրամադրու-
 թիւն ունի, ինչ է անոր կամքը :

Եւ առանց ֆրագմէտու դիմելու,
 ուղղակի կեանքը, հայ կեանքը դը-
 րաւ ունկնդիրներուն առջեւ իր ի-
 կական գոյնով, լրական պատկերով :
 Ժողովուրդին կուտելու արամադրու-
 թիւնը, անոր յեղափոխական ոգին
 պարզեց իրական օրինակներով, լա-
 կած վանէն, Սլաթէն, Մուշէն մին-
 չեւ Սասուն... բողոքանքով միե-
 յոյն ատեն մօտաւոր անցեալը ներ-
 կային հետ :

Յետոյ պարզեց թուրք բռնակալու-
 թեան որած կեղեքումները, աուր-
 քերու անտանելի քանակն ու որակը
 և այդ ժողովային պայմաններուն մէջ
 անգամ հայ զիւղացիին գէնք գնելու
 համար բրած մեծամեծ զոհողութիւն-
 ները :

Թուրքիկ ակնարկ մը նետեց մեզ և
 Մակեդոնացիները շրջապատող պայ-
 մաններուն վրայ : Գանի մը օրինակ-
 ներով ցոյց տուաւ թշնամիին ներկայ
 վիճակը :

Աս ամէնը պերճախօսորէն և զեղե-
 ցիկ կերպով բացատրելէ ետք, ան
 մօտաւորապէս յայտնեց հետեւեալ
 միտքը—երկու տարիերը թշնամիին և
 հայ ժողովուրդը—զէմ դիմաց կեցած
 են և պիտի բազմին իրարու, ահա-
 լոր պայթիւնը առաջ պիտի գայ, չեմ
 կրնար բռն երբ, պիտի լսէք այն ա-
 տեն ինչոպէս խնդրուի, վայնս,
 սուր, աղաքներու, մայրերու լացն
 ու կոծը, ի՞նչ գուցէ այդ երաժշտիկ
 տեսարանը աչքի առնելու ունենալէ ետ-
 քն ալ անտարբեր պիտի մնաք գանա-
 զան անհիմն առարկութիւններով,
 մատնիչէ մը աւելի գէշ պիտի ըլլաք :
 Ինչ համարումի, ինչ գաղափարի սէր
 կըլլաք եղէք, որքան կուզէք պոռա-
 ցէք, գրեցէք, հայաստանի հայը ձեզ-
 նէ գէնք կուզէ, սուէք անոր գէնք... :

Շոյց սալու համար թէ ո՞վ է երկ-
 րին մէջ միակ գործողը, ան սրամիտ
 առակէ մը ետք—որ այսօր ժողովուր-
 դին բերնէ վայր շինար—այսչոփ
 սիւսն լսաւ որ—եթէ մինչեւ հիմա
 սակաւին չէք հասկցեր կամ չէք ու-
 գեր հասկնալ, ապէ ետք բնաւ մի
 հասկնաք :

Եւ իբրք ալ ապէ կայծ և ուժով
 խօսք չէր կրնար ըլլալ, որ բուն ծա-

փերով ընդունուեցաւ...
 Մեր ընկերը իր խօսելու բնական
 ձրբին միացնելով, ինչպէս ըսի, իր
 անձական փոռձառութիւնը, հայ ի-
 րականութիւնը, այնքան խանդա-
 վառեց, այնքան ազդեց հասարակու-
 թեան վրայ որ, ամենէն անտար-
 բերներ անգամ ցնցուեցոն : Շատեր
 բանաստուութիւնէն ետքը չէին ուզեր
 բաժնուիլ իրմէն :

Դաշնակցական ընկերներու փոփո-
 քին վրայ Պ. Թորգոմեան պարզ հան-
 գանակութեան մը առաջարկը գրուի :
 Առաջին անգամն էր որ Երկրիկայի
 հայոց այս գեղեցիկ սովորութիւնը
 մաս կը գտնէր մեր խաբարներու մէջ :

Գանի մը վարկեանի մէջ գոյացաւ
 165 լիվ գէնքը գրամ, մանակցողնե-
 րուն մէջ կային էսնաֆներ, որոնք
 5-10 լիվով մասնակցեցան : Նուիրա-
 տութիւնները եղան կամաւոր և
 ինքնաբերաբար : Յաջորդ օրը արդէն
 նոր նուիրատուութիւններով գումարը
 հասաւ գրեթէ 200 լիվի :

Հասարակութիւնը սրահէն մեկնե-
 ցաւ ծայր սասիճանի գոհ և ողբո-
 րում :

Յիշուի
 7 Յունուար 1904

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Մարմատ 17 դեկտ.

Արանից երեք օր առաջ մի խումբ
 քերթ աւ գահներ թուով 35 հոգի
 քշում են Մահլամ գիւղի նախիրը .
 (այդ երկրորդ վտորն է, որ անուսն
 այս տարի) :

Լրտեսը վախից գոխը կորցրած
 հարոյ կանչելով մտնում է : Մահլամ
 և չփոխմամբ սրալ սեղեկութիւն է
 սալիս (իւ Մահլամի հարեան գիւղի
 Ձեւաջուկի նախիրն են սանում, իբր
 թէ) :

Այդ գիւղում սպրով մեր սղերբը
 (գաղանկացական) իսկոյն պատրաստում
 են հաւարի գնալու, բայց դժբաղա-
 բար միայն մէկն է, որ մի ունի
 (Յակոբը) :

Սա հեծնում է ձին և ուղիղ քշում
 զէպի լրալերի յայտնած գիւղը, բայց
 հէնց որ գաւառի է դուրս գալիս լա-
 նակուց յետոյ սանում է, որ Մահ-
 լամին է և ոչ թէ միւս գիւղից մեր
 քաջը հրամայում է թողնել նախիրը,
 բայց քաղաքը իրենց գնդակներով
 են պատասխանում և ապա աւազակ-
 ները կանչում են . «այն եղբայր մեզ
 ձեզ մի բան սան կ'ընք մինչեւ այսօր
 զուք ինչու ամեն անգամ, որ տեղ լի-
 նում է ձեզ մէջ տեղիք գցում իսկ այս
 անգամ «հաղթուկն» է պատասխանում
 «Մօսիին» հրացանի գնդակներով և
 քրդերից մէկը գիւղից զերբելով ցած
 է գալիս :

Գրգերը մի քանի մասի բաժան-
 ւած վրայ են տալիս ամեն կողմից
 բայց չեն կարողանում ոչ մի վնաս
 տալ և տեսնելով, որ գիւղից նոր հա-
 րայի եկողները խումբն երեւում է,
 թողնում են նախիրը և ձեռնունայն
 յետ դառնում միայն մի էլ են տանում :

Իսկ ինչ անուն տալ այն մարդուն
 երբ այդ բոլոր տեսնելուց յետոյ,
 այդպիսի գէպերում ինչայում է ի-
 րեն ձին խնդրող հերոսին, ասելով
 «ի՞նչ կը տանես մի շատ կը քշես ու
 կը յոգնիս, երեւակայեցէք ինչ սա-
 տիճանի անամօթութիւն է, որ ա-
 նում են այդ տեսակները : Ա՛յո հա-

գար և իւր ամօթ այդ տեսակնե-
 րին :

Յաւօք սրտի կարգացի Շարունակ
 այս շաբաթուայ մի համարը, որակող
 կարեոյ կուսակալի սրած սխալ տե-
 ղեկութեան իբրեւ հերքում մի քանի
 տող, որ այդ խմբերը չէ՛ թէ՛ կղի
 են «Հնչակեան» կեր (ըստ կուսակալի)
 այլ «Իսլամական» են որոնց մէջ
 և կղի է Յ. վաննէս Նէվրուզեանը,
 որտեղ կուր ժամանակ նախապետել է
 Ձեւ կայսլ յայտնել այն դառն
 վիշտը, որ ինձ պատեց, երբ կարող
 ցի այն մի քանի տող :

Յովհաննէս Նէվրուզեանի հե-
 քժառագար ծանօթացայ միայն այ-
 տարի, Թարգոմեան և Մարմատով,
 որը լաւ կարծ սեւեց բայց չնայած
 այդ կարծ միջոցին Նէվրուզեանը
 անջնջելի մի իշխանակ թողցի իմ սր-
 տում, իրեն սղու խօսքերով, որ ի
 էին Հայրենիքի ցաւելով, իրեն այդ
 ազգասրական խօսքերով մեծ յաջո-
 ղութիւններ գրաւ Թարգոմեանի Երեւա-
 սարդներ մէջ, առաջ քայելով զէպի
 յիշատակութեան սուրբ անպարէզը,
 նոյն բանը կատարելով նաև Մարմատ
 աւում, Ամեն մի շրջանում որ նա լի-
 նում էր միշտ քարոզում էր «Մահ-
 լամի» հայրենիքի սուրբ գրոյն տակ
 և այն ժամանակ ազատ կը լինիք,
 թէ՛ ներքին և թէ՛ արտաքին պատա-
 հարներին :

Ափսոս, որ երկար չեմ կարող գրել
 այդ հերոսի մասին, որովհետեւ սիրոս
 մորմոքում է այդ ցաւով, իմ սիրելի
 Նէվրուզեան, թող քո օրինակով և
 քեզ նման քաջ նահատակներ ի սուրբ
 արեան վրէժխնդրութեամբ լեցի հայ
 երիտասարդութիւնը, այնպիսի թը-
 նամի միան կարի Մուրթանի և ի-
 րեն ճիւղներ ի հետ, մինչեւ Հայաս-
 տանի սուրբ հողի վերայ չը ծածանուի
 ազատութեան սուրբ գրոյը, Այն ժա-
 մանակ կը խնդան ձեր հոգիները և
 հանգիստ կուտեն ձեր սովորները գե-
 րեցմանու :

Գարեգին

Թարեղ, 18 դեկ. 1903

Նոր բան չէ, ամէնքս էլ գիտենք,
 որ հիւանդը հէնց որ մտենում է
 մահուտն բողբին, նախ քան մտնելը
 ճիւղ է գործ դնում կենդանութեան
 նշաններ ցոյց տալ, բժշկը ու
 փորձում հիւանդագաններն են, որ
 իսկոյն հասկանում են այդ ճիգերի
 նետեալները :

Ներքին երկպառակութիւնը բոլոր-
 րովին հիմնադրական արեց Հնչակեան-
 կուսակցութիւնը, Յեղափոխական
 սուրբ գործը մոռացել՝ եղբայրաս-
 պանութիւնն են գաւառները դարձիլ
 իրենց համար : «Հայրենիք» լրագ-
 րում իրար ետեւից լոյս տեսնող մեր
 կացութիւնը, Պ. Պ. Թովմասեանի, Հը-
 րաշիւսի եւ ուրիշների կողմից ապա-
 ցուցանում են, որ այլևս Հնչակե-
 ան կուսակցութիւնը չկայ, այլ կայ
 միայն երկու նոյն անունով հրատա-
 րակուող թերթ, որոնց իւրաքանչի-
 իրը չըլապատուած է մի քանի բազ-
 դախողիքներով, որոնք պատրաստ
 են մի քանի կողմից—պատժելի հա-
 մար երկկուսյ սատարին այսօր հրեշ-
 տակ անուանելու, իրենց թքածը
 լիվում... ահա այդ կուսակցութիւնն
 է, որ ամէն ջանք ու ճիգ գործ է
 դնում, որ կենդանութեան նշանն
 անր ցոյց տալ այդ նպատակին հաս-
 նելու համար պէտք էր, հայհոյց եւ

որքան կարելի է շատ, բայց ուժ... այն կուսակցութեան որը հետո է եղբայրասպանութեան դաւերից, որ իր ոյժը կեդրոնացրել է բուն երկրում—բուն յեղափոխական գործում, այդ շ. Յ. Գոշնակցութիւնն է:

Հայհայտները պակաս չլինելու համար այդ խմբակները սկսեցին իրար յետեւից նոր-նոր թերթեր հրատարակել: «Ձայն Հայրենեաց», «Երեսուցի» Հայաստանու եւն, որոնցից եթէ չեմ սխալուում վերջինն է «Երեսուցի» թերթը, որը շատ ճիշդ կը լինէր, եթէ ասէին նեոսովետական Այդ թերթին իր լեզուով պատասխանելու համար մեզ հարկաւոր կը լինէր մի կրկնորդ վերածնութիւն եւ մի հատ էլ Պ. Ա. Յակոբեանի նշանաւ հրատարակահայտը: պարտնք պէտք է խոստովանել այդ տեսակետից տալանդ է: Մենք ուզեցինք միայն ընթերցողի ուշադրութիւնը հրաւիրել այդ իր թերթում լոյս տեսած մի քանի յօդուածների վրայ: «Երեսուցի» թերթը 14-ում Մի-Ֆրատոնի կեղծ ստորագրութեամբ մի պարուն «Երեսուցի» հակասութիւններն յօդուածում գրում է ի սիլի այլ ընդ նեոսովետներ, իբր թէ Թուրքի հայերը Սուլթան կրթագրիչին թեմական անաշնորդի ղեկավարութեամբ ճշկերոյթ են տուել: Գայիս են յայտնելու, որ այդ զգուշ գործում ոչ մի մեղք չունի ժողովուրդը: Այդ գործը թեմ. առաջ. Սիլի Մուրատեան է արել իր երկու հնչական բարեկամների խորհրդով: Խնձոյթին ներկայ են եղել մի քանի տուգներ (անգիտակցաբար) եւ մի քանի էլ սոցիալիստները որոնցից մէկը բարեհաճել է ճան խօսել: Մեզքը ձերն է պարտնք, կոկորդիլոսի արցունքներ մի թափել եւ կուժն ու կուլան խնդ ժողովրդի գլխին մի կտրելք: Եւ 18-ում պ. Սուլահի Թուրքի թղթակցութիւնը եւ յո. 19-ում Պ. Ա. Չիթախի Սալմաստից գրում նա մակը ձիւնայ են պատճառում ընթերցողին. բացի հակասութիւնից եւ մեծամտութիւնից ուրիշ բան չը

գտանք այնտեղ:

Պ. Սուլահի «Երեսուցի» թերթում է «Յուրակ Սալմաստեցուն», որովհետեւ վերջինը քաջութիւն է ունեցել որոշ չափով Չիթախի ու Մուրատեանի գիտակցութեամբ եւ «մատուցութիւն» է այնը ասելով, որ Չիթախը հնչական ներկայացուցչ է, միւս կողմից Պ. Չիթախի անելի դրոյալ է դուրս գալիս եւ ինքզինքն յեղափոխական է յայտարարում: Իսկ այն հարցին թէ ինչու «Սալմաստեցի» չը կը իսկական ստորագրութեամբ չէ գործ գալիս, մեղք կը պատասխանենք պարտնք, որ վարենում է ձեռնից մի գուցէ «Երեսուցի» թերթը ձեր հակառակորդներին ուստիկաններով պատկերում: Պ. Չիթախը մի քիչ զանազան է քաջում, որ բացականչում է «Մ. Սալմաստեցի եւ յեղափոխական» եւ աւելացնում է «գիտակցութեամբ ընթերցող, Սալմաստեցին երբեք չէ կարող հաշտել յեղափոխականի հետ», այդ բացարձակ սուտ է, մի սո.ա. որ միայն Չիթախը կարող է ասել փորձելով իր կաշու վրայ:

Մ. Ս. Չիթախ, Սալմաստի ժողովուրդը շատ լաւ է ճանաչում իսկական յեղափոխականին, նա միշտ սիրով իր գիրկը բաց է արել այդպիսիներին համար եւ բաց է անում հէնց այժմ էլ, միայն ձեռք եւ ձեռք նմանների համար է, որ նա տեղ չունի. թէ ինչու...այդ ինքնբեր էլ լաւ գիտէք:

«Եւ պէտք է լաւ գիտենայ պ. յոգրածագիրը, որ կան մարդիկ, եւ այն էլ յատ, որ աւելորդ ժամեր չունին իրենց ուղեղը ենթակրկելու անէն մի «Սալմաստեցի» ցնդաբանութեանց»: այդ մեծամտութիւնն է ու ձիւնայի մեծամտութիւնն, եթէ ձեր գէժ գրածները անհիմն են եւ դուք ունէք փաստեր նրանց հերքելու, այդ պիտի անէք առանց նկատի ունենալու ստորագրութեան «Սալմաստեցի» կամ Չիթախ լինելուն:

այդ ձեր պարտականութիւնն է:

Սեղծե՛ր, ձեր օրգանիզմը քայքայելու ու փշացել է արդէն. դուք ինքնախաբէութեան մէջ էք. մոռացած ձեր իսկական կոչումը դաւաճանութեամբ - եղբայրասպանութեամբ էք դրադած եւ երեւակայում էք թէ գործ էք կատարում:

Բայց ի՞նչ է ցոյց տալիս հնչականների պարտնք եւ հերոս Հրաչիայի «Կոչում» (Հայրենիք յո. 129):

Երբ պէտք բաւական չէ՝ ձեր բարասիրտ մէջ ամօթ բառը չկա՞յ:

Կաւար

ՌՈՒՍԱՆԱԶԱՅԵՐԸ

Թէև շատ անգամ գրուած է Ռուսականի կեանքէն, բայց անոնք նորէն մնացին անտարբեր և լուռ, երբեք չեն ուզել լսել իրենց հարազատ եղբայր կոչ ու ազազակը, կրակի աշխարհէն բարձրացած վէժի արդար զայրութի ձայները բնաւ ազդեցութիւն մը չըրին մեր Ռուսականայ եղբայրներու քարէ սրտերուն, միշտ ականջին լուռ կը պահեն չեն ուզեր ո՛ր է կերպով մը բարոյապէս կամ նիւթապէս նպաստել հայկական միակ ապաւէն յեղափոխութեան ուրիշ մեր անհնուս յոյս ու փրկութիւն կախում ունի:

Ես նամակագիրս որ Ռուսականի հայաշատ քանի մը քաղաքներէ տեղեկութիւններ հաւաքած ըլլալով տեղական հայեր բաւական ուսումնասիրած եմ, առաջին շատ ցաւալի եւ միանգամայն այլաստուած չաւրի մը մէջ կը գտնուին «Հայկական դատին» առթիւ ո՛ր է դաւաճար մը չունին և չենք ալ ունենար, կան կարգ մը տեղացի հայեր ալ որ հետեւեալ հարցումը կընեն. «Ներքայր ամեն ատեն հրատարակու կը պատարակին մեզ Ռուսականայիս հայկական յեղափոխութեան չըրականացիւնուս մենք ի՞նչ մեղաւոր ենք երբ չենք գիտեր թէ ս-

րո՞նք են յեղափոխականներ կամ ինչ ծրագիրներով կը գործեն կօմիտէի գիւնուորներն այս է սեղացիներու ստանց հարցը:

Խնդրեմ ներեցէք ձեռն որ ներկայիս հրատարակու Ձեր հարցին պատասխան տամ Յարգելի պարտնքի՛ր. դուք որ շատ քիչ էք զբաղած հայկական հարցով, կամ երբէք հետաքրքիր չէք հայերով որ ձեր արեւակից եղբայրնիւ են, ինչպէս ասացէք, ի՞նչ աղի կը պատկանիք, գիտեմ որ ձեր պատասխան պիտի ըլլայ «Հայ ենք» ատով մէկտեղ երբեմն ալ կը պարծիք թէ Անիի բնակիչներ էք, ուրախ ենք որ այդ պէս է. ուրեմն բուն Հայաստանի հայերու Լղբայրներ էք, բայց արդեօք երբէք կը յիշէք ձեր նախնեաց դատքերը. ոչ կը մտածէ՞ք որ անպատիւ սը գանոնք ձեռք բերել: ոչ:

Ուրեմն բարեհաճեցէք փոքրիկ գոհուցութիւն մը ընելու անգամ մը, ձեր ազգին:

Ռուսականայ
Համագաւապ

Վ Ր Ի Պ Ա Կ

Մեր անցեալ թիւի նախադրուածին մէջ պէտք է կարդալ. «Ես իրրեւ հնչ. կեդրոնի ներկայացուցիչ յայտարարում եմ, փոխանակ կարգալու՛ «Ես իրրեւ կեդրոնի անդամ» են:

Ս Տ Ա Յ Ա Ն Ք

«Օճար Խայնապի Բառեակիւն» Գեղեցիկ հրատարակութիւն մը «Անաճապ»ի սպարանէն, Բարիք:

Գ. Փառնակ հայացուցած է այստեղ պարսիկ բանաստեղծի մը—Օմար Պայլամի—Բառեակները, որոնց մէջ արդարեւ կը գտնուին բանաստեղծական գոհարներ:

Հայտարարութեան կցուած է քննական ուսումնասիրութիւն մը, թարգմանչին կողմէ:

Գին 3 Փր.

ՀԱՅԿ ԲԱՐՁՐԱՒԵԱՆՆԵՐ ԵՒ ԱՆԻ
(Ճանապարհորդական և կրթագործական Տոբ. Բորբախի)
(Շար. նախորդ թիւէն)

1046 թուականին հայ մեծերու մատուցած շնորհիւ Իրեզանդիայի ներք գրաւեցին Անին եւ հն. մնացին 18 տարի, առանց սակայն իրենց հայրենի տուած խոստումը կատարելու: Անոնք գաշնագրով խոստացել էին Սէլճուկներու արաբական քննարկումն ղէմ հայերը պաշտպանել. բայց Սէլճուկները արդէն սկըսեցին անոնց գիտազրուութեան աւերել հայաստանի հարաւային եւ արեւմտեան երկիրները: 1064ին Արփ-Արսլան (հօր առիւծը) անհամար զօրքերով քայլեց Անիի վրայ եւ Ախուրան գետի (Ալաճաչայ) հովտին մէջ, մեծ պարիսպին հիւսիսային կողմը որոշեց իրեն համար բանակաւորելու: Անիի զօրաց հրամանատարութիւնը կը վարէին Բագրատ, յունասէր հայ մը եւ Իրիգոր անուն վրացի մը—երկուքն ալ անկարող ու ապիկար զօրականներ: Սելճուկներու Անիի պարիսպներն վեր մագլցելու համար ըրած փորձերը ի զուր անցան: Այն ատեն Արփ-Արսլան ամ-

րոնցին մտեցոյց նմանը չտեսնուած մեծութեամբ փրկիկուան մը եւ յարի մը օր վերջ հրամայեց զլիսաւոր պարիսպներուն տակը մեքենայ մը դնել: Յարձ կուժը անհզ էր, բայց յետ մղուեցաւ: Սելճուկները արդէն կը մտածէին եւ քաջուրիլ եւ սղաշարուժը վերցնել. երբ այդ միջոցին հրամանատարները մտածելով, որ վերջ ի վերջոյ չպիտի կարողանան իրենց գիրքը պահպանել, որոշեցին Անին իր բնակիչներով քարաբոսներու ձեռքը ձգել եւ իրենք յունական զօրքով քաշուեցան միջնաբերդը, իրենեւ հաւատարմով, որ Սուլթանը այդ քաշուց գոհացում ստանալով եւ պիտի քաշուէր: Յուսանաւորութիւնը որ տիրեց քաղաքին մէջ, մեծ էր: Երբ զօրքը միջնաբերդ քաշուեցաւ 50 000 հոգի փորձեցին քաղաքէն դուրս ելլալ եւ հեռաւոր երկիրներ փախչելով իրենց կիսքը ազատել: Սելճուկները զարմացան երբ ժողովրդի լայն ու կոծր իմացան, յարձակմամբ քաղաքէն ներս խուժեցին եւ կտորեցին ինչ որ գտան, քանդեցին սուները ու պալատները, հողին հաւասարեցրին եւ պղծեցին եկեղեցիները, յետոյ քաղցին միջնաբերդին վրայ, չորս երկուս ու վաստիբոս առաջնորդները բերդը իր բաղլին ձգելով պաշտնի անցքերէն

փախուստ սուին առանց պաշտպանելու համար փոքրիկ փորձ մը իսկ ընելու: Ասիկա Անիի առաջին անբուժելի էր:

Ինակիչներու մեծ մասը Սեւ-ձովը կարելով Անցաւ Լեհաստան եւ արեւմտեան Ռուսաստան, որ անոնք Հայից մեծ իշխանէն գտան լաւ ընդունելութիւն: Անցել գաղթականներու իրար յաջորդող սերունդները երկար ատեն ապրեցան եւ դեռ այսօր կապիւն այդ հեռաւոր երկիրներու մէջ:

Իժարդը քաղաքի կործանման ներկայ եղող ակնատես մը կը գրէ. «Այնուհետեւ փախստական հայերը լեռներէն եւ հովիտներէն նորէն վար իջան ու կատարուածը տեսնելով անպատմելի ցաւով ձկսան լալ ու ողբալ իրենց հայրենիքը աւերուած եւ անարգուած էր, իրենց փառայեղ ու սիրելի Անին քանդուած ու անպատուցած, ամայի, առանց բնակչի, առանց շէնքերու: Անոնք անտես, որ Լեկեղեցիները կործանուած էին, պալատները եւ տուները քանդուած եւ բոլոր քաղաքը շարճողի երեւէն հարուածուած: Անոնք ողբացին իրենց վիճակը եւ անիծեցին այն շերտին պատակաստները, որովք Անիի հարազատ թագաւորներուն կործանման պատճառ դարձած

էին. անիծեցին յոյները, որոնք նենգամտաբար Հայոց մայրաքաղաքին տէրը դարձած էին, բայց յետոյ գայն անպաշտպան ձգած: Տեսնելով սիրելի քաղաքին վիճակը Հայերու յուսահատութիւնը եւ վիշտը չափ ու սահման չէր ուզեր ճանչնալ»

Այս հարուածէն ետքը Անի նորէն ծաղկեցաւ: Վրաստանի Բագրատունի թագաւորները չէին կրնար հանդուրժել, որ Անին անհատներու ձեռքը մնար: 12րդ դարուն մէջ վրացացի բանակները չորս անգամ Անին իւրեցին սէլճուկեան էմիրներու ձեռքէն: Արփ-սուլանի գրաւումէն ետք իր յաջորդները իրենց ամբողջ Անիի մէջ հաստատեցին եւ գայն նորէն գարչուցին անմաշխի ամրութիւն մը: Մեծ երկրաշարժէն առաջ Հայկ. մայրաքաղաքը տեսաւ եւ ուրիշ սարսափ մը: 1239ին ձէնկիդ-Պանի Չամարգան զօրապետը Անին քանդեց իր հիմքերէն: Մօսկովական սովորութեան համեմատ Չամարգան առաջուրէն լուր զրկեց Անի եւ բնակիչներէն պահանջեց անձնատուր ըլլալ: Դեսպանները սպաննուեցան: Բարբարոսները այս իմաստով կայծակի արագութեամբ երեւեցան Անիի առջև եւ քաղաքը առանց պաշարի ձգելով ըրջապատեցին գայն: Անօթութիւնը գործեց իր

